

ՊԱՍԿԱԼ



Պլեզ Պասկալը ծնվել է 1623 թվականին ֆրանսիական Կլերմոն քաղաքում: Պլեզը ութ տարեկան էր, երբ նրանց ընտանիքը տեղափոխվեց Փարիզ: Գիտությունների սիրահար նրա հայրը շատ արագ կապեր հաստատեց մի շարք գիտնականների հետ, որոնց հաճախ հրավիրում էր իր տուն՝ սրտանոտ զրույցների համար: Փոքրիկ Պլեզը հետևում էր այդ զրույցներին, որոնք հաճախ վերածվում էին սուր բանավեճերի և նրա մեջ արթնացնում անսահման հետաքրքրասիրություն, բանավիճելու, բանավեճերում անգամ մեծերին գերազանցելու բուռն ցանկություն: Հայրը ուրախությամբ էր հետևում որդուն, հաճույքով պատասխանում նրա բազմաթիվ հարցերին, բացառությամբ մաթեմատիկայի. նա գտնում էր, որ մաթեմատիկայով զբաղվելը կարող է վատ անդրադառնալ առողջությամբ չփայլող Պլեզի վրա: Տասներկու տարեկանում Պլեզը պատահաբար լսեց երկրաչափության մասին:

-Ի՞նչ է երկրաչափությունը, -հարցրեց նա հորը:

-Գծերի, պատկերների, մարմինների և նրանց հատկությունների մասին գիտություն է, որ քեզ համար դեռ վաղ է իմանալ, -կարճ կապեց հայրը:

Բայց գծերն ու պատկերները պատանուն հանգիստ չէին թողնում: Նա հորից գաղտնի գծում ու գծում էր զանազան պատկերներ: Այսպես նա «հայտնաբերեց» հարթաչափության շատ պատկերներ, որոնց տվեց իր անվանումները: Այս զբաղմունքների ընթացքում նա հասկացավ, որ այդ պատկերների որոշ հատկություններ հետևում են մյուսներից: Որոշ հատկություններ նա ընդունեց առանց ապացուցման, իսկ որոշները ապացուցեց դրանց օգնությամբ. այսպես նա հանգեց արսիոմի և թեորեմի հասկացություններին: Մի անգամ հայրը նրան բռնացրեց այս զբաղմունքի ընթացքում: Սկզբում հայրը անհանգստացավ և ուզում էր զայրանալ որդու վրա: Բայց որդու կարճ բացատրությունից հետո ապշեց. տղան ինքնուրույն հայնաբերել էր եվկլիդեսի երկրաչափության շատ թեորեմներ, մասնավորապես՝ եռանկյան ներքին անկյունների գումարի մասին թեորեմը: Հոր ուրախությունը անսահման էր: Նա տուն հրավիրեց իր ծանոթ մաթեմատիկոսներից մեկին, որի զարմանքը պակաս չէր:

-Քո որդին ապագա մեծագույն մաթեմատիկոսներից մեկը կլինի, -ասաց մաթեմատիկոսը և չսխալվեց:

Արագ ծանոթանալով մաթեմատիկային, Պլեզը արդեն տասնվեց տարեկանում հայտնաբերեց պրոյեկտիվ երկրաչափության ամենագեղեցիկ թեորեմներից մեկը, որն այսօր կոչվում է նրա անունով: Հետագայում նա կատարեց բազմաթիվ հայտնագործություններ մաթեմատիկայում և գիտության այլ բնագավառներում, մասնավորապես դրեց հավանականությունների

տեսության հիմքը, ստեղծեց առաջին հաշվիչ մեքենան, որն աշխատեց շատ դարեր: Սակայն դիպվածը նրան ստիպեց հեռանալ գիտությունից: Երբ նա 31 տարեկան էր, Սենայի վրայով ձգվող կամրջի վրա նրան տանող կառքը վթարի ենթարկվեց, և Պասկալը հազիվ փրկվեց: Այս միջադեպը ճակատագրական եղավ նրա կյանքում. նա քաշվեց եկեղեցի և կյանքի մնացած ութ տարիներին գիտությամբ չզբաղվեց: